



Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական
Օրհուս կենտրոնի

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվար - դեկտեմբեր

2013թ.

СТАТИСТИКА

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի միջոցառումներին մասնակցել են **454 մարդ**

Կենտրոնի ծառայություններից(գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում,) օգտվել են **97 մարդ**:

Աղյուսակ I	Միջոցառումների անվտանգություն	Քանակը՝ 40	100 %
	Հասարակական քննարկում	1	2.5 %
	կլոր սեղան-քննարկումներ	11	27.5%
	Հանրային լսումներ	1	2.5 %
	Գործնական աշխատանքներ և արձագանքներ / շարաբայակ, ծառայություն, akcia UNEP /	3	7.5%
	Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	10	25%
	Դասընթացներ, սեմինար-քննարկումներ է կոկորթական միջոցառումներ	9	22.5%
	Շնորհանդես	2	5%
	Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	2	5%
	Փորձագիտական խորհրդի նիստեր	1	2.5%

2013թ կենտրոնի գործունեությունը իրականացվել է ԵԱՀԿ «Համայնքային անվտանգություն» նախաձեռնությունից բխող ծրագրի շրջանակում, ներառելով ոչ միայն շրջակա միջավայրի հետ անմիջական առնչություն ունեցող, այլև սոցիալական, առողջապահական, արտադրական անվտանգության, կրթական ու համայնքային անվտանգությունն անուղղակիորեն խոչընդոտող հարցեր

Աղյուսակ III	Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	454	100%
	ՀԿ ներկայացուցիչները	60	13.2 %
	պատանիներն ու երիտասարդներ	99	21.8 %
	ԶԼՄ ներկայացուցիչներ	11	2.5 %
	տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	78	17.2%
	Այլ/շահագրգիռ քաղաքացիներ/	206	45.3 %

Աղյուսակ III 2013 թ. Կենտրոնի ծառայություններից օգտվել են 97 քաղաքացի					
month	Պատճ	գրադ	փևտ.	Ֆիլմ.	Խորհրդ.
I	4	1		2	
II	5	2		2	1
III	9	3		1	6
IV	3	2	1	2	1
V	6	2		2	
VI	4	1		1	
VII	2	1		2	
VIII	1	1		2	
IX	3	2		2	
X	12	1		1	
XI	2	1		1	
Ընդ. 97	51	17	1	19	9

Հայաստանում Օրիուսի կոնվենցիայի իրականացմանը աջակցման Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների

ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կենտրոնը կազմակերպում է Օրիուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:



29.05.13. համատեղ դասընթաց
«ԱՄՊԱԴԵՁ ՀԿ»

«Օրիուսի կոնվենցիայի
հիմնադրույթները» և

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ
օրենքը



29.06.2013թ. սեմինար «Տեղական ինքնակառավարումը և
բյուջետային համակարգը կարգավորող
օրենսդրությունը» թեմայով

03.06.13. սեմինար «Համայնքի համախմբում»
թեմայով . «Harmonia» ՀԿ

ՆՊԱՏԱԿ 2

Կենտրոնը հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):



14.09.13. Կլոր սեղան քննարկում –

„Մելիքի խնդիրները,
ՀԿ-ների ներկայացուցիչների հանդիպումը Մելիքի
բնակիչների և համայնքի ղեկավարի հետ:

24.02.13. Կլոր սեղան-քննարկում Մելիքցյուղի
գյուղապետարանում Թուխմանուկի ոսկու հանքի
էրրորդ պոչամբարի կառուցման վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցում էին
ՏԻՄ, ՋԼՄ, ՀԿ ,հասարակայնության
ներկայացուցիչներ



24.09.13.

Այցելություն Մելիք և Թուխմանուկի հանք:
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի,
Էկոդաշինք ՀԿ-ի, Էկոպլանդեմիա ՀԿ-ի,
ՋԼՄ, Ապարանի Օրհու.ս ներկայացուցիչների
հանդիպում գյուղի բնակիչների հետ,

14.03.13. Հասարակական քննարկում

Մելիքցյուղի ՏԻՄ, բնակիչների,
հանքարդյունահանող ընկերության, ՀԿ և ՋԼՄ-ների
մասնակցությամբ:



05.10.13. Կլոր սեղան քննարկում համայնքի բնապահպանական խնդիրները, փորձագետի կատարած հետազոտությունների վերաբերվող հավաստի տեղեկատվություն տրամադրում, առողջ միջավայրում ապրելու քաղաքացու իրավունքի մասին իրազեկում:



24.09.13 կլոր սեղան քննարկում - ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Էկոդաշինք , Էկոակադեմիա ՀԿ-ների , ՋԼՄ և հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ : Քննարկվեցին տարածաշրջանի բնապահպանական խնդիրներ, Օրհուսի կոնվենցիայի դրույթների կատարումը գործնականում՝ Մելիքի Թուխմանուկի օրինակով:



05.10.13. Օրհուս կենտրոնների համակարգողների, անկախ փորձագետի, լրագրողների այցելություն Մելիք, Ռյա Թագա համայնքներ, Թուխմանուկի ռսկու հանքավայր բնակիչների հետ հանդիպելու, հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրները քննարկելու, անկախ փորձագետի կատարած հետազոտությունների վերաբերվող հավաստի տեղեկատվություն և վերլուծված տվյալներ ներկայացնելու և լաբորատոր ուսումնասիրություններ անցկացնելու , համայնքների տարածքում մշակվող բուսատեսակների նմուշներ վերցնելու նպատակով :

ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցություն հասարակական լսումներին և դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվության տարածում :



19.04.13. Մասնակցություն „Թուխմանուկ,, ոսկու հարստացուցիչ հանքի նոր պոչամբարի նախագծի մասնագիտական լսումներին ՀՀ բնապահպանության նախարարությունում:

ՆՊԱՏԱԿ 4

Կենտրոնը կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն) :




10.04.13. Քննարկում Ապարանի №2 դպրոցի ունուցիչների հետ «Վտանգավոր պուրակ» թեմայով: Զինկոմիսարիատի հարակից տարածքի գերհասունացած, հաստաբուն, բարձր բարդիների պուրակի և համայնքին վտանգ առաջացնող բարդիների էտի անհրաժեշտության վերաբերյալ կազմվեց դիմում և ուղարկվեց քաղաքապետին :



10.11.13. Օրհուս կենտրոնը կարևորվում է ալպյան մարգագետինների պահպանությունը, կազմակերպում է բնակչության իրազեկման և էկոլոգիական այդ իրավախախտումների սահմանված տուգանքների լուսաբանում, նամակներ են ուղարկվել տարածաշրջանի բոլոր համայնքապետերին, հայտարարություն է տրվել տեղական հեռուստաալիքով:

14.05.2013. Շաբաթօրյակ և ծառատունկ Քաղաքապետարանի, Օրհուս կենտրոնի, հիմնարկությունների աշխատակիցների մասնակցությամբ: Նպատակը՝ քաղաքի սրբման, կանաչապատման, բարեկարգման աշխատանքների իրականացում:



ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կենտրոնը կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:



17.06.2013. դասընթաց «Հանրաքայունարեքությունը և տարածաշրջանի զարգացումը»>>. հնարավոր բնապահպանական, սոցիալական, առողջապահական խնդիրները տարածաշրջանում



15.07.13. Մեմինար

«Խաղալիքների անվտանգության հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության երկխոսություն»>> թեմայով: Նպատակը՝ «Հայ կանայք հանուն » ՀԿ-ի կողմից իրականացվող «Թույներից ազատ խաղալիքներ» ծրագրի հետազոտությունների արդյունքների ներկայացում Ապարանի մանկապարտեզների ղեկավարներին և կոլեկտիվների անդամներին.



17.04.13. Մեմինար. Ավագ դպր . ուսուցիչների համար. «Հանրաքայունարեքություն. Թուխմանուկի ռիսկերը >> ֆիլմի դիտում-քննարկում: Նպատակը՝ հասարակության լայն շերտերի մասնակցությունը բնապահպանության հարցերում, համայնքների, հասարակության լայն խավերի փոխհամաձայնեցված, գործունեության ապահովում.




Էկոլրթական դասընթացներ կրթօջախների սաների, երիտասարդների համար



30.05.13. Դասընթաց «Հնայաստանի էներգառեսուրսները» Ապարանի աշակերտների, SPAR խմբակի անդամների, ուսուցիչների համար: **ՏԱՊԱՆ ԷԿՈՍԿՈՒՄԲ ՀԿ** նախաձեռնությամբ և կենտրոնի աջակցությամբ կազմակերպվեց Էքսկուրսիա Հայկական ԱԷԿ,



28.05.13. Դասընթաց Ուսուցիչների և աշակերտների, այգեգործությամբ զբաղվող փորձառու բնակիչների մասնակցությամբ. «Կենսաբազմազանության պահպանությունը գյուղական և քաղաքային միջավայրում» թեմայով:



05.06.13. Շրջակա միջավայրի պաշտպանության օրը Երևանի մանկական գրոսայգում. Նպատակը՝ շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը հնամենի կոթողներ ներգրավելն էր, օգտագործված պլաստիկից, մաշված անվաղողերից պլեյստիկից և հրերի պատրաստում



24.05.13. Դասընթաց Թոշիկների պահպանության ՀԿ նախաձեռնությամբ Ապարանի №2 դպրոցում: Մասնակիցներն ընդլայնեցին իրենց գիտելիքները թռչունների դերի, նշանակության և պահպանության մասին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՄ ԲՏՀԿ

Դեկտեմբեր 2013թ.

համակարգող՝ Նատալիա Մանուկյան
հեռ. բջջ. /374 34/ 22-49-26
հեռ. /374 252/ 6-23-60

E-mail: info_aparan@aarhus.am